ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հաստատված է ամբիոնի նիստում**

________Պատմության______________
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Ֆ.Վ.Մովսիսյան /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 9____

«_23_» __հունվարի,__ 2024_ թ.

# Պ/Մ-030 ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

**Մասնագիտություն՝** ___022201.00.7 -Պատմություն___
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** ___022201.01.7- Պատմություն___
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** ________մագիստր_______________
/բակալավր, մագիստրատուրա/

**Ամբիոն՝** _______պատմության ____________
/ամբիոնի լրիվ անվանումը/

**Ուսուցման ձևը՝** _________առկա_________________
/առկա, հեռակա/

**Կուրս/ կիսամյակ** առկա **1-ին կուրս, 2-րդ կիսամյակ**

**Դասախոս** **Արմեն Մարուքյան**
/անուն ազգանուն/

Էլ. հասցե mararm@mail.ru

Վանաձոր- 2024թ.

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

**1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում.**

«Հայոց ցեղասպանության հաղթահարման պատմաիրավական հիմքերը» դասընթացը կարևորվում է պատմության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է 022201.01.7 - պատմություն կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում:

**2. Դասընթացի նպատակը և խնդիրները.**

1. «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման պատմաիրավական հիմքերը» դասընթացի նպատակն է մագիստրանտներին ներկայացնել ինչպես Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ճանապարհին առկա հիմնախնդիրները, այնպես էլ դրանց լուծման պատմաիրավական հիմքերն ու հիմնավորումները: Հայոց ցեղասպանության մասին անցած տասնամյակների ընթացքում բավականին շատ է գրվել ու խոսվել, հայ և օտարազգի պատմաբանները զգալի աշխատանք են կատարել 20-րդ դարի առաջին ցեղասպանության ուսումնասիրման և այդ հանցագործության տարբեր հիմնահարցերի լուսաբանման ուղղությամբ: Չնայած այդ հսկայածավալ աշխատանքների՝ հայ ժողովրդի նկատմամբ 20-րդ դարի սկզբին կատարված ոճրագործությունը դեռևս անպատիժ է մնում:

Պետք է միաժամանակ նշել, որ իրավական հարթության վրա Հայոց ցեղասպանության, որպես մարդկության դեմ կատարված հանցագործության, ուսումնասիրությամբ զբաղվել են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի որոշ մասնագետներ՝ փորձելով մատնանշել միջազգային իրավունքի տեսակետից Թուրքիայի պատասխանատվությունը հայ ժողովրդի նկատմամբ իրականացրած հանցագործության համար: Սակայն իրավական հարթության վրա կատարված ուսումնասիրություններն ու հետազոտությունները կրում են ավելի շատ գիտատեսական բնույթ, այնինչ անհրաժեշտ է պատմական փաստերը և միջազգային իրավական տեսական գիտելիքները տեղափոխել գործնական-կիրառական հարթություն: Հարկավոր է հստակ պատկերացնել, թե ժամանակակից միջազգային իրավունքն ինչ գործնական հնարավորութուններ է ընձեռում ցեղասպանութան զոհ հանդիսացող հայ ժողովրդին հասնելու այդ հանցագործության իրական դատապարտմանը և Հայոց ցեղասպանության հետևանքների վերացմանը:

Այս իմաստով չափազանց կարևոր է հրապարակի վրա եղած պատմաիրավական ուսումնասիրությունների, ինչպես նաև միջազգային իրավական նորմերի հիման վրա ցույց տալ այն հնարավորությունները, որոնք կարող են օգտագործվել հայկական պահանջատիրության արդարացի լուծման և Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային իրավունքը մեծապես հենվում է նախադեպերի վրա, որոնք զգալի դեր են կատարում միջազգային իրավունքի տեսությունը հարստացնելու և նոր միջազգային իրավական նորմեր ձևավորելու գործում, մեթոդաբանական առումով է նաև ուսումնասիրել այլ ժողովուրդների նկատմամբ կատարված ցեղասպանությունների դատապարտման գործընթացները, փորձելով դրանք դիտարկել իբրև նախադեպեր՝ Հայոց ցեղասպանության դատապարտման գործընթացի համար:

Բացի այդ, Հայոց ցեղասպանության դատապարտման գործընթացի համար կարևոր նշանակություն ունեն միջազգային տարբեր կազմակերպությունների ու ատյանների կողմից Հայոց ցեղասպանությանը տրված որակումներն ու մեկնաբանությունները, որոնք նույնպես կարող են օգտագործվել Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման, ինչպես նաև տվյալ գործընթացում այդ կառույցների գործնական աջակցությունն ու օժանդակությունը ստանալու տեսակետից:

Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման առումով կարևոր նշանակություն ունեն միջազգային պայմանագրերը, կոնվենցիաները. այն իմաստով, որ դրանց դրույթների ու հոդվածների վրա հենվելով կարելի է ձևակերպել ու ներկայացնել այնպիսի միջազգային իրավական պահանջներ, որոնք լինեն ոչ խոցելի միջազգային իրավունքի տեսակետից և ընդունելի միջազգային հանրության համար:

Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի ունեցած կորուստների հատուցման հարցը քննարկելիս պետք է նկատի ունենալ, որ գոյություն ունեն մի շարք կարևոր հարցեր, որոնք անմիջականորեն կապ ունեն տվյալ հանցագործության հետևանքների վերացման հետ: Այս հարցի լուծման ճանապարհին կան կոնկրետ հիմնախնդիրներ, որոնք հաջողությամբ հաղթահարելով միայն հնարավոր է շարժվել առաջ և հասնել հարցի վերջնական կարգավորմանը:

Վերը նշվածով էլ կարևորվում է առարկայի ուսումնասիրությունը մագիստրոսի կրթական ծրագրում:

**Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները**

«Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման պատմաիրավական հիմքերը» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների տեսական գիտելիքների, կարողությունների ու հմտությունների առկայությունը հայոց և համաշխարհային պատմության նոր և նորագույն շրջանի, վերաբերյալ, գիտելիքներ Հայոց ցեղասպանության և հայկական հարցի պատմության, ցեղասպանությունների պատմության վերաբերյալ:

**3. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունքները**

«Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման պատմաիրավական հիմքերը» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքները.

<u>գիտելիք՝</u>

- Հայկական հարցին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերի ողջ փաթեթն ու դրանից բխող Օսմանյան կայսրության ստանձնած պարտավորությունները
- ցեղասպանության հանցագործության վերաբերյալ միջազգային իրավական պայմանագրերը, կոնվենցիաներն ու դրանցից բխող Թուրքիայի պարտավորությունները
- տարբեր երկրների խորհրդարանների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման փաստաթղթերը
- ցեղասպանությունների հետևանքների հաղթահարման դատական և արտադատական գործընթացները

<u>կարողություն՝</u>

<u>ուսումնասիրել և հետազոտել՝</u>

- Հայ դատի լուծման միջազգային-իրավական հնարավորությունները՝ հենվելով պատմական փորձի, միջազգային իրավական փաստաթղթերի ու նախադեպերի վրա

<u>բացահայտել՝</u>

- Միջազգային իրավական փաստաթղթերի համաձայն Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվությունը

<u>հմտություն՝</u>

<u>տիրապետել՝</u>

- ցեղասպանության հանցագործության վերաբերյալ միջազգային-իրավական նորմերին, դրանց կիրառման հնարավորություններին ու եղանակներին
- միջազգային պայմանագրերում Հայկական հարցի ձևակերպումներին ու դրանցից բխող Թուրքիայի պատասխանատվության դրույթներին
- տարբեր երկրների խորհրդարանների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերին ու դրանց գործնականում կիրառելու հնարավորություններին
- Հայաստան-Թուրքիա հարբերությունների հաստատման համատեքստում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հնարավորություններին
- Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման պատմաիրավական հիմքերին
- վերլուծել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հնարավորություններն ու ընթացակարգերը:

Առարկայի ուսումնասիրության արդյունքում ուսանողը պետք է տիրապետի հետևյալ կոմպետենցիաներին.

<u>ա) Գործիքային կոմպետենցիաներ</u>

- վերլուծության և համադրության կարողություն
- տեղեկույթը կառավարելու հմտություն (տեղեկույթի ձեռք բերում, համակարգում, վերլուծում)
- որոշումներ կայացնելու կարողություն

<u>բ) Միջանձնային կոմպետենցիաներ</u>

-քննադատության և ինքնաքննադատության կարողություն

- միջանձնային գործնական հմտություններ
- բարոյական պատասխանատվության կարողություն
- միջմշակութային տարբերությունները ճանաչելու կարողություն

<u>գ) Համակարգային կոմպետենցիաներ ՝ՀԳԿ</u>

- գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն
- հետազոտական կարողություն
- ուսումնառության կարողություն
- նոր իրավիճակներին հարմարվելու կարողություն
- ինքնուրույն աշխատելու կարողություն
- որակը վերահսկելու կարողություն

<u>դ) Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ ԱԿ</u>

- *Առարկայական իմացության*
  - տրամաբանական մտածողության օրենքների օգտագործման ունակություն
  - գիտական նոր գիտելիքների ձեռքբերման ունակություն

- հիմնական մեթոդները օգտագործելու, գիտության մեջ մոդելավորման, տեսական և գիտափորձնական հետազոտության մեթոդները կիրառելու պատրաստվածություն

- մասնագիտական գործունեության մեջ համակարգչային, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից միտումները հաշվի առնելու ունակություն

- մասնագիտական գործունեության ոլորտում տեղեկատվության հավաք-ման, վերլուծության, համակարգման և օգտագործման պատրաստվածություն

**4. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների.**

«Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման պատմաիրավական հիմքերը» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել իր մասնագիտական գործունեության ընթացքում, դպրոցում, արխիվում, թանգարանում աշխատելու, նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և պատմության ուսումնասիրման բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

**5. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը**

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | 3 կրեդիտ/90 ժամ | |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ | ժամաքանակ |
|---|---|---|
| Դասախոսություն | 24 | |
| Գործնական աշխատանք | | |
| Սեմինար պարապմունք | 12 | |
| Լաբորատոր աշխատանք | | |
| Ինքնուրույն աշխատանք | 54 | |
| **Ընդամենը** | 90 | |
| Ստուգման ձևը քննություն | Ստուգարք | |

6. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>.

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի

նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

- **Սեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:
  Սեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակությանհարցադրումների և պատասխանների մասին:

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

7. **Դասավանդման մեթոդներներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք:

9.**Ուսումնառության մեթոդներն են** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն:

**10.Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[1].**

| հ/հ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | ինքնուրույն աշխատանք |
| | **Մաս1. Ցեղասպանության հանցագործությունը միջազգային իրավունքում:** | 4 | 2 | | | 10 |
| 1. | Թեմա 1.1. Ցեղասպանության հանցագործության գնահատումը միջազգային իրավունքում մինչև «գենոցիդ» եզրույթի առաջացումը: | | | | | |
| 2. | Թեմա 1.2. «Ցեղասպանություն» («գենոցիդ») եզրի առաջացումն ու շրջանառումը միջազգային իրավունքում: Ցեղասպանության հանցագործության հանցակազմի սահմանումը ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայում: | | | | | |
| | **Մաս 2. Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման միջազգային - իրավական հիմնախնդիրները:** | 4 | 2 | | | 10 |
| 3. | Թեմա 2.1. Թուրքիայի՝ որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ լինելու հիմնահարցը: | | | | | |
| 4. | Թեմա 2.2. ՀՀ կողմից Հայոց ցեղասպանության համար պահանջատեր լինելու իրավունքի հարցն ըստ միջազգային իրավունքի: | | | | | |
| 5. | Թեմա 2.3. Էթնիկ խմբերի զանգվածային սպանությունների գնահատման հարցը Հայոց ցեղասպանության կատարման պահին գործող միջազգային իրավական նորմերի տեսակետից: | | | | | |
| 6. | Թեմա 2.4. «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» | | | | | |

[1] Նման է օրացուցային պլանին

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի բացերը և միջազգային իրավական նորմերի կատարելագործման խնդիրը: | | | | | |
| 7. | Թեմա 2.5. Հայոց ցեղասպանության դատապարտման ու դրա հետևանքների վերացման մարտավարական ու ռազմավարական քայլերի հաջորդականության խնդիրը: | | | | | |
| | **Մաս 3. Հայկական հարցը միջազգային պայմանագրերում և Օսմանյան կայսրության պատասխանատվությունը:** | 4 | 2 | | | 10 |
| 8. | Թեմա 3.1. Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը Փարիզի պայմանագրով: | | | | | |
| 9. | Թեմա 3.2. Հայերի իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը Սան-Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերով և «Մայիսյան բարենորոգումների» ծրագրի համաձայն: | | | | | |
| 10. | Թեմա 3.3. Հայերի իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը 1914թ. ռուս-թուրքական պայմանագրով: Հայերի զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության պատասխանատվության հարցը 1915թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հռչակագրով: | | | | | |
| 11. | Թեմա 3.4. Հայերի իրավունքների խախտման փորձերն Օսմանյան կայսրության կողմից Բրեստ-Լիտովսկի ու Բաթումի պայմանագրերով: Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը Մուդրոսի զինադադարի հոդվածների համաձայն: | | | | | |
| 12. | Թեմա 3.5. Հայերի իրավունքների պաշտպանության և զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության պատասխանատվության հարցը Սևրի պայմանագրի համապատասխան հոդվածներով: Հայերի զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության քաղաքական պատասխանատվությունը ըստ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի: Սևրի պայմանագրի և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | իրավարար վճռի հարաբերակցության հարցը: | | | | | |
| 13. | Թեմա 3.6. Քեմալական Թուրքիայի կողմից հայերի իրավունքների խախտման փորձերն Ալեքսանդրապոլի, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով: Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Թուրքիայի պարտավորությունը Լոզանի պայմանագրի համաձայն: Հայերի իրավունքների պաշտպանության տեսակետից Սևրի և Լոզանի պայմանագրերի հարաբերակցության հարցը: | | | | | |
| | **Մաս 4. Երիտթուրքերի դատավարությունը և Թեհլիրյանի դատական գործի նշանակությունը Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համատեքստում:** | 4 | 2 | | | 8 |
| 14. | Թեմա 4.1. Երիտթուրքերի դատավարության ընթացքը, մեղադրական եզրակացությունները, հարցաքննությունները և դատավճիռները: Երիտթուրքերի դատավարության իրավական նշանակությունը Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման տեսակետից: | | | | | |
| 15. | Թեմա 4.2. Թեհլիրյանի դատական գործը Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համատեքստում: | | | | | |
| | **Մաս 5. Հայոց ցեղապանության դատապարտումը տարբեր միջազգային կազմակերպությունների ու երկրների կողմից և դրա նշանակությունը:** | 4 | 2 | | | 8 |
| 16. | Թեմա 5.1. Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը եվրոպական երկրների խորհրդարաններում: Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը այլ երկրների խորհրդարաններում: | | | | | |
| 17. | Թեմա 5.2. Հայոց ցեղապանության դատապարտումը միջազգային կազ-մակերպությունների կողմից և դրա նշանակությունը: | | | | | |
| | **Մաս 6. Հայոց ցեղասպանության և հրեական հոլոքոստի ճանաչման ու դատապարտման գործընթացների համեմատական վերլուծությունը:** | 4 | 2 | | | 8 |
| 18. | Թեմա 6.1.Հայոց ցեղասպանության և հրեական հոլոքոստի ճանաչման ու դատապարտման գործընթացների ընդհանրությունները: Հայոց | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ցեղասպանության և իրեական հոլոքոստի ճանաչման ու դատապարտման գործընթացների տարբերությունները: | | | | | |
| 19. | Թեմա 6.2. Հայոց ցեղասպանությունը Հայաստան-Թուրքիա հարաբերություն-ների հաստատման համատեքստում: | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 24 | 12 | | | 54 |

## 1.4. ՈՒսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

## Պարտադիր գրականություն

**8. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ**

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| **Պարտադիր գրականություն (ՊԳ)** | | |
| 1. Արաբյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Երևան, 1996:<br>2. Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Երևան, 1999;<br>3. Դաղլյան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը և ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները (գիտագործնական միջազգային գիտաժողով)», Մոսկվա, 2008:<br>4. Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրէնքը, Պէյրութ, 1976:<br>5. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. II, Երևան, 1983:<br>6. Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Երևան, 2000: | | |

7. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ. Կիրակոսյանի խմբ., Երևան, 1972:
8. Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988:
9. Հովհաննիսյան Վ., Սևրի 1920թ. օգոստոսի 10-ի հաշտության պայմանագիրը և հայոց պահանջատիրությունը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները (գիտական զեկուցումների ժողովածու)», Մոսկվա, 2008:
10. Մարգարյան Վ., Հայոց ցեղասպանության վերաբերյալ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ԱՄՆ) համար կատարած իրավաբանական վերլուծության մասին, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 8, Երևան, 2003:
11. Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանության միջազգային իրավական պատասխանատվությունը և Մեծ Բրիտանիան (1915-1923 թթ.), «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 5, Երևան, 2002:
12. Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները (գիտագործնական միջազգային գիտաժողով)», Մոսկվա, 2008:
13. Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Երևան, 2003:
14. Áàðñåãîâ Þ., Àðáèòðàæíîå ðåøåíèå ïðåçèäåíòà ÑØÀ ïî àðìÿíî-òóðåöêîé ãðàíèöå, Åðåâàí, 1995.
15. Áàðñåãîâ Þ., Ãåíîöèä àðìÿí – ïðåñòóïëåíèå ïî ìåæäóíàðîäíîìó ïðàâó, Ìîñêâà, 2000.
16. Áàðñåãîâ Þ., Ãåíîöèä àðìÿí – ïðåñòóïëåíèå ïðîòèâ ÷åëîâå÷åñòâà, Åðåâàí, 1990.
17. Áàðñåãîâ Þ., Ê âîïðîñó î ïðèìåíèìîñòè êîíâåíöèè 1948 ãîäà ê ãåíîöèäó àðìÿí, “Âåñòíèê Àðìÿíñêîãî èíñòèòóòà ìåæäóíàðîäíîãî ïðàâà è ïîëèòîëîãèè â Ìîñêâå”, N 1, Ìîñêâà, 2004.
18. Áàðñåãîâ Þ., Íîâûé ýòàï ïðèçíàíèé êàê óñëîâèå ðåàëèçàöèè îòâåòñòâåííîñòè Òóðöèè çà ãåíîöèä, “Âåñòíèê Àðìÿíñêîãî èíñòèòóòà

ìåæäóíàðîäíîãî ïðàâà è ïîëèòèëîãèè â Ìîñêâå”, N 3, Åðåâàí, 2005.

19. Áàðñåãîâ Þ., Îòâåòñòâåííîñòü ãîñóäàðñòâà çà ãåíîöèä â ìåæäóíàðîäíîì ïðàâå, “Ãåíîöèä – ïðåñòóïëåíèå ïðîòèâ ÷åëîâå÷åñòâà. Ìàòåðèàëû I ìîñêîâñêîãî ìåæäóíàðîäíîãî ñèìïîçèóìà”, Ìîñêâà, 1997.
20. Áàðñåãîâ Þ., Òóðåöêàÿ äîêòðèíà ìåæäóíàðîäíîãî ïðàâà íà ñëóæáå ïîëèòèêè ãåíîöèäà (î êîíöåïöèè ÷ëåíà “êîìèññèè ïðèìèðåíèÿ” Ãþíäóç Àêòàíà), Ìîñêâà, 2002.
21. “Ñóäåáíûé ïðîöåññ Òàëààòà ïàøè”, ïîä ðåäàêöèåé Ñ. Ñòåïàíÿíà, Åðåâàí, 2007.
22. Îãàíÿí Ï., Ãåíîöèä àðìÿíñêî íàðîäà è çàùèòà ïðàâ ÷åëîâåêà, Åðåâàí, 2004.
23. Ìàðãàðÿí Â., Îñíîâàíèÿ ìåæäóíàðîäíî-ïðàâîâîé îòâåòñòâåííîñòè çà ãåíîöèä àðìÿí, “Âåñòíèê Àðìÿíñêîãî èíñòèòóòà ìåæäóíàðîäíîãî ïðàâà è ïîëèòîëîãèè â Ìîñêâå”, N 3, Åðåâàí, 2005.

## Լրացուցիչ գրականություն (ԼԳ)

1. Տիգրանեան Տ., Անգլիան եւ հայերը, Երևան, 1994:
2. Տատրեան Վ., Հայոց ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Բերկլի, 1995:
3. Ãàìåëåí À., Áðîí Æ.-Ì., Âîññòàíîâëåííàÿ ïàìÿòü, Åðåâàí, 1995.
4. “Ãåíîöèä àðìÿí â Îñìàíñêîé èìïåðèè. Ñáîðíèê äîêóìåíòîâ”, ïîä ðåäàêöèåé Ì. Íåðñèñÿíà, Åðåâàí, 1983.
5. Äàäðèÿí Â., Îáçîð ìàòåðèàëîâ òóðåöêîãî âîåííîãî òðèáóíàëà ïî îáâèíåíèþ â ãåíîöèäå àðìÿí: õàðàêòåð è çíà÷èìîñòü ÷åòûðåõ îñíîâíûõ ñåðèé ñóäåáíîãî ðàçáèðàòåëüñòâà, “Ãåíîöèä – ïðåñòóïëåíèå ïðîòèâ ÷åëîâå÷åñòâà. Ìàòåðèàëû I ìîñêîâñêîãî ìåæäóíàðîäíîãî ñèìïîçèóìà”, Ìîñêâà, 1997.
6. “Ìåæäóíàðîäíûå îòíîøåíèÿ â ýïîõó èìïåðèàëèçìà, Äîêóìåíòû èç àðõèâîâ Öàðñêîãî è Âðåìåííîãî ïðàâèòåëüñòâà. 1878-1917”, Ìîñêâà-Ëåíèíãðàä, 1931-1940.
7. “Ðóññêèå èñòî÷íèêè î ãåíîöèäå àðìÿí â Îñìàíñêîé èìïåðèè 1915-1916”, ñîñò. Ã. À. Àáðàìÿí, Ò. Ã. Ñåâàí-Õà÷àòðÿí, Åðåâàí, 1995.
8. “Ñáîðíèê ìåæäóíàðîäíûõ äîãîâîðîâ”, ò. 1, ÷. 2, Óíèâåðñàëüíûå äîãîâîðû ÎÎÍ, Íüþ-Éîðê è Æåíåâà, 1994.

## 9. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
### 9.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Գրականություն |
|---|---|---|---|---|
| 1. | **Մաս1. Ցեղասպանության հանցագործությունը միջազգային իրավունքում:** | Ցեղասպանության հանցագործության գնահատումը միջազգային իրավունքում մինչև «գենոցիդ» եզրույթի առաջացումը: «Ցեղասպանություն» («գենոցիդ») եզրի առաջացումն ու շրջանառումը միջազգային իրավունքում: Ցեղասպանության հանցագործության հանցակազմի սահմանումը ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայում: | 4 | Արաքյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Երևան, 1996թ<br>2. Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Երևան, 2003թ.:<br>Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, Երևան, 1998:<br>Բարդակչյան Կ.Պ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 1991:Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Երևան, 2014թ. Իրանն այսօր |
| | **Մաս 2. Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման միջազգային - իրավական հիմնա-խնդիրները:** | Թուրքիայի՝ որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ լինելու հիմնահարցը: Թեմա 2.2. ՀՀ կողմից Հայոց ցեղասպանության համար պահանջատեր լինելու իրավունքի հարցն ըստ միջազգային իրավունքի էթնիկ խմբերի զանգվածային սպանությունների գնահատման հարցը Հայոց ցեղասպանության կատարման պահին գործող միջազգային իրավական նորմերի տեսակետից: «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի բացերը և միջազգային իրավական նորմերի կատարելագործման խնդիրը:<br><br>Հայոց ցեղասպանության դատապարտման ու դրա հետևանքների վերացման մարտավարական ու ռազմավարական քայլերի հաջորդականության խնդիրը: | 4 | Արաքյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Երևան, 1996թ<br>2. Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Երևան, 2003թ.:<br>Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, Երևան, 1998:<br>Բարդակչյան Կ.Պ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 1991:Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Երևան, 2014թ. Իրանն այսօր |
| | **Մաս 3. Հայկական հարցը միջազգային պայմանագրերում և** | Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը Փարիզի | 4 | Արաքյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Երևան, 1996:<br>Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **Օսմանյան կայսրության պատասխանատվութ-յունը:** | պայմանագրով: Հայերի իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը Սան-Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերով և «Մայիսյան բարենորոգումների» ծրագրի համաձայն: Հայերի իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը 1914թ. ռուս-թուրքական պայմանագրով: Հայերի զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության պատասխանատվության հարցը 1915թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հռչակագրով: Հայերի իրավունքների խախտման փորձերն Օսմանյան կայսրության կողմից Բրեստ-Լիտովսկի ու Բաթումի պայմանագրերով: Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը Մուդրոսի զինադադարի հոդվածների համաձայն:<br><br>Հայերի իրավունքների պաշտպանության և զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության պատասխանատվության հարցը Սևրի պայմանագրի համապատասխան հոդվածներով: Հայերի զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության քաղաքական պատասխանա-տվությունը ըստ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի: Սևրի պայմանագրի և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի հարաբերակցության հարցը:<br><br>Քեմալական Թուրքիայի կողմից հայերի իրավունքների խախտման փորձերն Ալեքսանդրապոլի, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով: Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Թուրքիայի պարտավորությունը Լոզանի պայմանագրի | | պատասխանատվությունը, Երևան, 1999;<br>Դադայան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը և ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները (գիտագործնական միջազգային գիտաժողով)», Մոսկվա, 2008:<br>Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. II, Երևան, 1983:<br>Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Երևան, 2000:<br>Հովհաննիսյան Վ., Սևրի 1920թ. օգոստոսի 10-ի հաշտության պայմանագիրը և հայոց պահանջատիրությունը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները (գիտական զեկուցումների ժողովածու)», Մոսկվա, 2008:<br>Մարգարյան Վ., Հայոց ցեղասպանության վերաբերյալ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ԱՄՆ) համար կատարած իրավաբանական վերլուծության մասին, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 8, Երևան, 2003:<br>Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանության միջազգային իրավական պատասխանատվությունը և Մեծ Բրիտանիան (1915-1923 թթ.), «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 5, Երևան, 2002:<br>Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները (գիտագործնական միջազգային գիտաժողով)», Մոսկվա, 2008:<br>Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Երևան, 2003: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | համաձայն: Հայերի իրավունքների պաշտպանության տեսակետից Սևրի և Լոզանի պայմանագրերի հարաբերակցության հարցը: | | |
| 14 | **Մաս 4. Երիտթուրքերի դատավարությունը և Թեհլիրյանի դատական գործի նշանակությունը Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համատեքստում:** | Երիտթուրքերի դատավարության ընթացքը, մեղադրական եզրակացությունները, հարցաքննությունները և դատավճիռները: Երիտթուրքերի դատավարության իրավական նշանակությունը Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման տեսակետից: Թեհլիրյանի դատական գործը Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համատեքստում: | 4 | Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, Երևան, 1998:<br>Արաքյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Երևան, 1996:<br>Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Երևան, 1999;<br>Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ. Կիրակոսյանի խմբ., Երևան, 1972:<br>Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988: |
| | **Մաս 5. Հայոց ցեղասպանության դատա-պարտումը տարբեր միջազգային կազմակեր-պությունների ու երկրնե-րի կողմից և դրա նշանակությունը:** | Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը եվրոպական երկրների խորհրդարաններում: Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը այլ երկրների խորհրդարաններում: Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազ-մակերպությունների կողմից և դրա նշանակությունը: | 4 | Արաքյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Երևան, 1996:<br>Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Երևան, 1999;<br>Դադայան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը և ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները (գիտագործնական միջազգային գիտաժողով)», Մոսկվա, 2008:<br>Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրէնքը, Պեյրութ, 1976:<br>Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. II, Երևան, 1983:<br>Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Երևան, 2000:<br>Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ. Կիրակոսյանի խմբ., Երևան, 1972:<br>Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988:<br>Մարգարյան Վ., Հայոց ցեղասպանության վերաբերյալ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ԱՄՆ) համար կատարած իրավաբանական վերլուծության մասին, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 8, Երևան, 2003:<br>Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանության միջազգային իրավական պատասխանատվությունը և Մեծ Բրիտանիան (1915-1923 թթ.), «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 5, Երևան, 2002:<br>Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները (գիտագործնական միջազգային գիտաժողով)», Մոսկվա, 2008: |
| | **Մաս 6. Հայոց ցեղասպանության և հրեական հոլոքոստի ճանաչման ու դատապարտման գործընթացների համեմատական վերլուծությունը:** | Հայոց ցեղասպանության և հրեական հոլոքոստի ճանաչման ու դատապարտման գործընթացների ընդհանրությունները: Հայոց ցեղասպանության և հրեական հոլոքոստի ճանաչման ու դատապարտման գործընթացների տարբերությունները: Հայոց ցեղասպանությունը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հաստատման համատեքստում: | 4 | Արաքյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Երևան, 1996:<br>Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Երևան, 1999;<br>Դադայան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը և ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները (գիտագործնական միջազգային գիտաժողով)», Մոսկվա, 2008:<br>Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրէնքը, Պէյրութ, 1976:<br>Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. II, Երևան, 1983:<br>Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Երևան, 2000:<br>Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ. Կիրակոսյանի խմբ., Երևան, 1972:<br>Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Երևան, 1988:<br>Հովհաննիսյան Վ., Սևրի 1920թ. օգոստոսի 10-ի հաշտության պայմանագիրը և հայոց պահանջատիրությունը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները (գիտական զեկուցումների ժողովածու)», Մոսկվա, 2008:<br>Մարգարյան Վ., Հայոց ցեղասպանության վերաբերյալ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ԱՄՆ) համար կատարած իրավաբանական վերլուծության մասին, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 8, Երևան, 2003:<br>Матосян Т. Геноцид армян и холокост евреев. Попытка |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | сравнения, (на арм. яз), Ер., 2005.<br>Черни И. В. Подход к более широкому определению геноцида: правовое понятие соучастия в геноциде и геноцид как следствие загрязнения и разрушения природной среды, Материалы I Московского Международного Симпозиума «Геноцид – преступление против человечества», М., 1997. |

### 9.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն |
|---|---|---|---|---|---|
| | **Ցեղասպանության հանցագործությունը միջազգային իրավունքում:** | Ցեղասպանության հանցագործության գնահատումը միջազգային իրավունքում մինչև «գենոցիդ» եզրույթի առաջացումը: «Ցեղասպանություն» («գենոցիդ») եզրի առաջացումն ու շրջանառումը միջազգային իրավունքում: Ցեղասպանության հանցագործության հանցակազմի սահմանումը ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայում: | 2 | բանավոր | Արաբյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Երևան, 1996թ<br>2. Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Երևան, 2003թ.:<br>Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, Երևան, 1998:<br>Բարդակչյան Կ.Պ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 1991:<br>Արմեն Մարուքյան, Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Երևան, 2014թ.Իրանն այսօր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման միջազգային - իրավական հիմնա- խնդիրները:** | Թուրքիայի՝ որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ լինելու հիմնահարցը: ՀՀ կողմից Հայոց ցեղասպանության համար պահանջատեր լինելու իրավունքի հարցն ըստ միջազգային իրավունքի Էթնիկ խմբերի զանգվածային սպանությունների գնահատման հարցը Հայոց ցեղասպանության կատարման պահին գործող միջազգային իրավական նորմերի տեսակետից: «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի բացերը և միջազգային իրավական նորմերի կատարելագործման խնդիրը:<br><br>Հայոց ցեղասպանության դատապարտման ու դրա հետևանքների վերացման մարտավարական ու ռազմավարական քայլերի հաջորդականության խնդիրը: | 2 | | Արաբյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Երևան, 1996թ<br>2. Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Երևան, 2003թ.: Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, Երևան, 1998:<br>Բարդակչյան Կ.Պ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 1991:Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Երևան, 2014թ. Իրանն այսօր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Հայկական հարցը միջազգային պայմանագրերում և Օսմանյան կայսրության պատասխանատվութ-յունը:** | Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը Փարիզի պայմանագրով: Հայերի իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը Սան-Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերով և «Մայիսյան բարենորոգումների» ծրագրի համաձայն: Հայերի իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը 1914թ. ռուս-թուրքական պայմանագրով: Հայերի զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության պատասխանատվության հարցը 1915թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հռչակագրով: Հայերի իրավունքների խախտման փորձերն Օսմանյան կայսրության կողմից Բրեստ-Լիտովսկի ու Բաթումի պայմանագրերով: Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտ-պանության Օսմանյան կայսրության պարտավորությունը Մուդրոսի զինադադարի հոդվածների համաձայն:<br><br>Հայերի իրավունքների պաշտպանության և զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության պատասխանատվության հարցը Սևրի պայմանագրի համապատասխան հոդվածներով: Հայերի զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության քաղաքական պատասխանատվությունը ըստ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի: Սևրի պայմանագրի և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի հարաբերակցության հարցը:<br><br>Քեմալական Թուրքիայի կողմից հայերի իրավունքների խախտման փորձերն Ալեքսանդրապոլի, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով: Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտ- | 4 | | Արաբյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Երևան, 1996թ<br>2. Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Երևան, 2003թ.: Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, Երևան, 1998:<br>Բարդակչյան Կ.Պ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 1991:Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Երևան, 2014թ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Երիտթուրքերի դատավարությունը և Թեհլիրյանի դատական գործի նշանակությունը Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համատեքստում:** | Երիտթուրքերի դատավարության ընթացքը, մեղադրական եզրակացությունները, հարցաքննությունները և դատավճիռները: Երիտթուրքերի դատավարության իրավական նշանակությունը Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման տեսակետից: Թեհլիրյանի դատական գործը Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համատեքստում: | 4 | | Արաբյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Երևան, 1996թ 2. Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Երևան, 2003թ.: Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, Երևան, 1998: Բարդակչյան Կ.Պ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 1991:Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Երևան, 2014թ. |
| | **Հայոց ցեղասպանության դա-տապարտումը տարբեր միջազգային կազմակերպութ-յունների ու երկրների կողմից և դրա նշանա-կությունը:** | Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը եվրոպական երկրների խորհրդարաններում: Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտ-ման գործընթացը այլ երկրների խորհրդարան-ներում: Հայոց ցեղասպանության դատա-պարտումը միջազգային կազմակերպություն-ների կողմից և դրա նշանակությունը: | 4 | | Արաբյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Երևան, 1996թ 2. Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Երևան, 2003թ.: Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, Երևան, 1998: Բարդակչյան Կ.Պ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 1991:Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Երևան, 2014թ. |
| | **Հայոց ցեղասպանության և հրեական հոլոքոստի ճանաչման ու դատապարտման գործընթացների համեմատական վեր-լուծությունը:** | Հայոց ցեղասպանության և հրեական հոլոքոստի ճանաչման ու դատապարտման գործընթացների ընդհանրությունները: Հայոց ցեղասպանության և հրեական հոլոքոստի ճանաչման ու դատապարտման գործընթացների տարբերութ-յունները: Հայոց ցեղասպանությունը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հաստատման համատեքստում: | 4 | | Արաբյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Երևան, 1996թ 2. Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Երևան, 2003թ.: Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, Երևան, 1998: Բարդակչյան Կ.Պ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 1991:Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Երևան, 2014թ. |

## 9.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Աշխատանքի տեսակը | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ցեղասպանություն հասկացությունը. ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիան | Ռեֆերատ, զեկույց | Մինչև կիսամյակի ավարտը | Բանավոր, գրավոր | Արաբյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Երևան, 1996թ<br>2. Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Երևան, 2003թ.:<br>Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, Երևան, 1998: |
| 2 | Հայոց ցեղասպանության և հրեաների ցեղասպանության համեմատական վերլուծություն | Ռեֆերատ, զեկույց | Մինչև կիսամյակի ավարտը | Բանավոր, գրավոր | Матосян Т. Геноцид армян и холокост евреев. Попытка сравнения, (на арм. яз), Ер., 2005.<br>Черни И. В. Подход к более широкому определению геноцида: правовое понятие соучастия в геноциде и геноцид как следствие загрязнения и разрушения природной среды, Материалы I Московского Международного Симпозиума «Геноцид – преступление против человечества», М., 1997. |
| | | | | | |

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | քարտեզներ |
| | |
| Սարքեր, սարքավորումներ | Պրեյեկտոր, համակարգիչ, ինտերնետ կապ |
| Համակարգչային ծրագրեր | |

| | |
|---|---|
| Այլ | |

## 10. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի:

### 10.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

### 10.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով: Միջանկյալ ստուգումը կազմակերպվում է կիսամյակի ընթացքում 2 անգամ, թեսթերի և տեսական հարցերի միջոցով: Տեսական հարցերն ընդգրկում են 10 միավոր արժեք ունեցող հարցեր, թեստերը՝ 10, 20 միավոր ընդհանուր արժողությամբ: Ամփոփիչ ստուգումը կազմակերպվում է բանավոր հարցման ձևով:

10.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

# Հարցաշար

1. Ցեղասպանության հանցագործության գնահատումը միջազգային իրավունքում մինչև «գենոցիդ» եզրույթի առաջացումը
2. «Ցեղասպանություն» («գենոցիդ») եզրի առաջացումն ու շրջանառումը միջազգային իրավունքում
3. Ցեղասպանության հանցագործության հանցակազմի սահմանումը ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայում
4. Թուրքիայի՝ որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ լինելու հիմնահարցը
5. ՀՀ կողմից Հայոց ցեղասպանության համար պահանջատեր լինելու իրավունքի հարցն ըստ միջազգային իրավունքի
6. Էթնիկ խմբերի զանգվածային սպանությունների գնահատման հարցը Հայոց ցեղասպանության կատարման պահին գործող միջազգային իրավական նորմերի տեսակետից
7. «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի բացերը և միջազգային իրավական նորմերի կատարելագործման խնդիրը
8. Հայոց ցեղասպանության դատապարտման ու դրա հետևանքների վերացման մարտավարական ու ռազմավարական քայլերի հաջորդականության խնդիրը
9. Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը Փարիզի պայմանագրով
10. Հայերի իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունները Սան-Ստեֆանոյի պայմանագրով, գաղտնի համաձայնագրերը և Բեռլինի պայմանագիրը
11. Հայերի իրավունքների պաշտպանության հարցը 1880 1895թթ. մարդասիական միջամտությունների ժամանակ և «Մայիսյան բարենորոգումների» ծրագիրը
12. Հայերի իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը 1914թ. ռուս-թուրքական պայմանագրով
13. Հայերի զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության պատասխանատվության հարցը 1915թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հռչակագրով
14. Հայերի իրավունքների խախտման փորձերն Օսմանյան կայսրության կողմից Բրեստ-Լիտովսկի ու Բաթումի պայմանագրերով

15. Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը Մուդրոսի զինադադարի համաձայն
16. Հայերի իրավունքների պաշտպանության և զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության պատասխանատվության հարցը Սևրի պայմանագրի համապատասխան հոդվածների համաձայն
17. Հայերի զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության քաղաքական պատասխանատվությունն ըստ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի
18. Սևրի պայմանագրի և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի հարաբերակցության հարցը
19. Քեմալական Թուրքիայի կողմից հայերի իրավունքների խախտման փորձերն Ալեքսանդրապոլի, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով
20. Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Թուրքիայի պարտավորությունը Լոզանի պայմանագրի հոդվածների համաձայն
21. Հայերի իրավունքների պաշտպանության առումով Սևրի և Լոզանի պայմանագրերի հարաբերակցության հարցը
22. Երիտթուրքերի դատավարության ընթացքը, մեղադրական եզրակացությունները, հարցաքննությունները և դատավճիռները
23. Երիտթուրքերի դատավարության իրավական նշանակությունը Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման տեսանկետից
24. Թալեաթ փաշայի սպանության գործով Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը գերմանական դատարանում
25. Թալեաթ փաշայի սպանության դատական գործի օրգանական կապը երիտթուրքերի դատավարության հետ
26. Սողոմոն Թեհլիրյանի դատավարության նշանակությունը Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման տեսանկետից
27. Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը եվրոպական երկրների խորհրդարաններում
28. Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը ոչ եվրոպական երկրների խորհրդարաններում
29. Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը միջազգային կազմակերպությունների կողմից
30. Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը միջազգային ոչ պաշտոնական կազմակերպությունների կողմից

31. Հայոց ցեղասպանության և իրեական հոլոքոստի ճանաչման ու դատապարտման գործըն-թացների ընդհանրությունները
32. Հայոց ցեղասպանության և իրեական հոլոքոստի ճանաչման ու դատապարտման գործըն-թացների տարբերությունները
33. Հայոց ցեղասպանությունն իբրև ՀՀ հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու թուրքական նախապայման
34. Հայոց ցեղասպանության հարցի քննարկումը հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի շրջանակներում
35. Հայոց ցեղասպանության դատապարտման գործընթացը դիվանագիտական հարաբերու-թյուններ հաստատելու մասին հայ-թուրքական արձանագրությունների համատեքստում

**10.4. Գնահատման չափանիշները.**

Սեմինար / գործնական աշխատանք՝ 40 միավոր
Ինքնուրույն աշխատանք՝ 20 միավոր
Առաջին ընթացիկ ստուգում՝ 20 միավոր
Երկրորդ ընթացիկ ստուգում՝ 20 միավոր

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# Պ/Մ-030 ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Մասնագիտություն՝ ___022201.00.7 -Պատմություն___

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ ___022201.01.7- Պատմություն___

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ ________մագիստրատուրա________________

/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2024

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">Պ/Մ-030 Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման պատմաիրավական հիմքերը</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">3 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">1-ին տարի, 2-րդ կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="6">Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">36</td><td>Դասախոսություն</td><td>24</td></tr>
<tr><td>Սեմինար</td><td>12</td></tr>
<tr><td>Լաբորատոր աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">54</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">90</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">ստուգարք</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">Առարկայի նպատակն է ներկայացնել ինչպես Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ճանապարհին առկա հիմնախնդիրները, այնպես էլ դրանց հաղթահարման պատմաիրավական հիմքերն ու հնարավորությունները: Առարկան նպատակ ունի պատմական փաստերի ու միջազգային իրավական նորմերի ու սկզբունքների համադրությամբ այն ուղիները, որոնք կարող են օգտագործվել հայ ժողովրդի նկատմամբ իրագործված այդ ծանր միջազգային հանցագործության հետևանքները վերացնելու գործում: Քանի որ միջազգային իրավունքը մեծապես հենվում է նախադեպերի վրա, հատուկ ուշադրություն է դարձվում այլ ժողովուրդների նկատմամբ իրագործված ցեղասպանությունների դատապարտաման գործընթացների վերլուծմանը, որոնք կարող են նախադեպ հանդիսանալ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացում: Առարկայի շրջանակներում ներկայացվում է նաև տարբեր երկրների խորհրդարանների և կառավարական ու ոչ կառավարական միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը և դրա հնարավոր ազդեցությունը այդ հանցագործության հետևանքների հաղթահարման վրա:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">«Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման պատմաիրավական հիմքերը» դասընթացի ուսումնասիրման</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքները.<br><br><u>գիտելիք՝</u><br><br>- Հայկական հարցին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերի ողջ փաթեթն ու դրանից բխող Օսմանյան կայսրության ստանձնած պարտավորությունները<br>- ցեղասպանության հանցագործության վերաբերյալ միջազգային իրավական պայմանագրերը, կոնվենցիաներն ու դրանցից բխող Թուրքիայի պարտավորությունները<br>- տարբեր երկրների խորհրդարանների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման փաստաթղթերը<br>- ցեղասպանությունների հետևանքների հաղթահարման դատական և արտադատական գործընթացները<br><br><u>կարողություն՝</u><br><br><u>ուսումնասիրել և հետազոտել՝</u><br><br>- Հայ դատի լուծման միջազգային-իրավական հնարավորությունները՝ հենվելով պատմական փորձի, միջազգային իրավական փաստաթղթերի ու նախադեպերի վրա<br><br><u>բացահայտել՝</u><br><br>- Միջազգային իրավական փաստաթղթերի համաձայն Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվությունը<br><br><u>հմտություն՝</u><br><br><u>տիրապետել՝</u><br><br>- ցեղասպանության հանցագործության վերաբերյալ միջազգային-իրավական նորմերին, դրանց կիրառման հնարավորություններին ու եղանակներին<br>- միջազգային պայմանագրերում Հայկական հարցի ձևակերպումներին ու դրանցից բխող Թուրքիայի պատասխանատվության դրույթներին<br>- տարբեր երկրների խորհրդարանների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերին ու դրանց գործնականում կիրառելու հնարավորություններին<br>- Հայաստան-Թուրքիա հարբերությունների հաստատման համատեքստում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հնարավորություններին<br>- Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման պատմաիրավական հիմքերին |

| | |
|---|---|
| | - <u>վերլուծել</u> Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հնարավորություններն ու ընթացակարգերը: |
| Դասընթացի բովանդակությունը | **Մաս 1. Ցեղասպանության հանցագործությունը միջազգային իրավունքում:**<br><br>Թեմա 1.1. Ցեղասպանության հանցագործության գնահատումը միջազգային իրավունքում մինչև «գենոցիդ» եզրույթի առաջացումը:<br><br>Թեմա 1.2. «Ցեղասպանություն» («գենոցիդ») եզրի առաջացումն ու շրջանառումը միջազգային իրավունքում: Ցեղասպանության հանցագործության հանցակազմի սահմանումը ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայում:<br><br>**Մաս 2. Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման միջազգային-իրավական հիմնախնդիրները:**<br><br>Թեմա 2.1. Թուրքիայի` որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ լինելու հիմնահարցը:<br><br>Թեմա 2.2. ՀՀ կողմից Հայոց ցեղասպանության համար պահանջատեր լինելու իրավունքի հարցն ըստ միջազգային իրավունքի:<br><br>Թեմա 2.3. Էթնիկ խմբերի զանգվածային սպանությունների գնահատման հարցը Հայոց ցեղասպանության կատարման պահին գործող միջազգային իրավական նորմերի տեսակետից:<br><br>Թեմա 2.4. «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի բացերը և միջազգային իրավական նորմերի կատարելագործման խնդիրը:<br><br>Թեմա 2.5. Հայոց ցեղասպանության դատապարտման ու դրա հետևանքների վերացման մարտավարական ու ռազմավարական քայլերի հաջորդականության խնդիրը:<br><br>**Մաս 3. Հայկական հարցը միջազգային պայմանագրերում և Օսմանյան կայսրության պատասխանատվությունը:**<br><br>Թեմա 3.1. Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը Փարիզի պայմանագրով:<br><br>Թեմա 3.2. Հայերի իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը Սան-Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերով և «Մայիսյան բարենորոգումների» ծրագրի համաձայն:<br><br>Թեմա 3.3. Հայերի իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը 1914թ. ռուս-թուրքական |

| | |
|---|---|
| | պայմանագրով: Հայերի զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության պատասխանատվության հարցը 1915թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հռչակագրով:<br><br>Թեմա 3.4. Հայերի իրավունքների խախտման փորձերն Օսմանյան կայսրության կողմից Բրեստ-Լիտովսկի ու Բաթումի պայմանագրերով: Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Օսմանյան կայսրության պարտավորությունը Մուդրոսի զինադադարի հոդվածների համաձայն:<br><br>Թեմա 3.5. Հայերի իրավունքների պաշտպանության և զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության պատասխանատվության հարցը Սևրի պայմանագրի համապատասխան հոդվածներով: Հայերի զանգվածային սպանությունների համար Օսմանյան կայսրության քաղաքական պատասխանատվությունը ըստ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի: Սևրի պայմանագրի և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի հարաբերակցության հարցը:<br><br>Թեմա 3.6. Քեմալական Թուրքիայի կողմից հայերի իրավունքների խախտման փորձերն Ալեքսանդրապոլի, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով: Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Թուրքիայի պարտավորությունը Լոզանի պայմանագրի համաձայն: Հայերի իրավունքների պաշտպանության տեսակետից Սևրի և Լոզանի պայմանագրերի հարաբերակցության հարցը:<br><br>**Մաս 4. Երիտթուրքերի դատավարությունը և Թեհլիրյանի դատական գործի նշանակությունը Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համատեքստում:**<br><br>Թեմա 4.1. Երիտթուրքերի դատավարության ընթացքը, մեղադրական եզրակացությունները, հարցաքննությունները և դատավճիռները: Երիտթուրքերի դատավարության իրավական նշանակությունը Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման տեսակետից:<br><br>Թեմա 4.2. Թեհլիրյանի դատական գործը Հայոց ցեղասպանության ճա-նաչման ու դատապարտման համատեքստում:<br><br>**Մաս 5. Հայոց ցեղապանության դատապարտումը տարբեր միջազգային կազմակերպությունների ու երկրների կողմից և դրա նշանակությունը:**<br><br>Թեմա 5.1. Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը եվրոպական երկրների խորհրդարաններում: Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը այլ երկրների խորհրդարաններում: |

| | |
|---|---|
| | Թեմա 5.2. Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից և դրա նշանակությունը:<br><br>**Մաս 6. Հայոց ցեղասպանության և հրեական հոլոքոստի ճանաչման ու դատապարտման գործընթացների համեմատական վերլուծությունը:**<br><br>Թեմա 6.1.Հայոց ցեղասպանության և հրեական հոլոքոստի ճանաչման ու դատապարտման գործընթացների ընդհանրությունները: Հայոց ցեղասպանության և հրեական հոլոքոստի ճանաչման ու դատապարտման գործընթացների տարբերությունները:<br><br>Թեմա 6.2. Հայոց ցեղասպանությունը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հաստատման համատեքստում: |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները** | Ուսանողը դասընթացին կարող է հանդես բերել մինչև 100% առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է ողջ տարվա ընթացքում ուսանողի կատարած աշխատանքների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է ներքոհիշյալ բաղադրիչներին համապատասխան: Յուրաքանչյուր բաղադրիչի դիմաց նշված առավելագույն տոկոսը կարելի է հավաքել ծրագրային պահանջների շրջանակներում տվյալ կետի տակ ներկայացված պահանջները 100% -ով կատարելու դեպքում:<br><br>Սեմինար/ գործնական աշխատանք՝ 40 միավոր<br><br>Ինքնուրույն աշխատանք՝ 20 միավոր<br><br>Առաջին ընթացիկ ստուգում՝ 20 միավոր<br><br>Երկրորդ ընթացիկ ստուգում՝ 20 միավոր |
| Գրականություն | **Հիմնական**<br>1. Արաքյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Երևան, 1996:<br>2. Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Երևան, 1999;<br>3. Դաղայան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը և ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները (գիտագործնական միջազգային գիտաժողով), Մոսկվա, 2008: |

| | |
|---|---|
| | 4. Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրէնքը, Պեյրութ, 1976:<br>5. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, h. II, Երևան, 1983:<br>6. Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Երևան, 2000:<br>7. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ. Կիրակոսյանի խմբ., Երևան, 1972:<br>8. Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988:<br>9. Հովհաննիսյան Վ., Սևրի 1920թ. օգոստոսի 10-ի հաշտության պայմանագիրը և հայոց պահանջատիրությունը, Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները (գիտական զեկուցումների ժողովածու), Մոսկվա, 2008:<br>10. Մարգարյան Վ., Հայոց ցեղասպանության վերաբերյալ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ԱՄՆ) համար կատարած իրավաբանական վերլուծության մասին, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, N 8, Երևան, 2003:<br>11. Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանության միջազգային իրավական պատասխանատվությունը և Մեծ Բրիտանիան (1915-1923 թթ.), Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, N 5, Երևան, 2002:<br>12. Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում, Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները |

(գիտագործնական միջազգային գիտաժողով), Մոսկվա, 2008:

13. Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Երևան, 2003:
14. Áàðñåãîâ Þ., Àðáèòðàæíîå ðåøåíèå ïðåçèäåíòà ÑØÀ ïî àðìÿíî-òóðåöêîé ãðàíèöå, Åðåâàí, 1995.
15. Áàðñåãîâ Þ., Ãåíîöèä àðìÿí – ïðåñòóïëåíèå ïî ìåæäóíàðîäíîìó ïðàâó, Ìîñêâà, 2000.
16. Áàðñåãîâ Þ., Ãåíîöèä àðìÿí – ïðåñòóïëåíèå ïðîòèâ ÷åëîâå÷åñòâà, Åðåâàí, 1990.
17. Áàðñåãîâ Þ., Ê âîïðîñó î ïðèìåíèìîñòè êîíâåíöèè 1948 ãîäà ê ãåíîöèäó àðìÿí, “Âåñòíèê Àðìÿíñêîãî èíñòèòóòà ìåæäóíàðîäíîãî ïðàâà è ïîëèòîëîãèè â Ìîñêâå”, N 1, Ìîñêâà, 2004.
18. Áàðñåãîâ Þ., Íîâûé ýòàï ïðèçíàíèé êàê óñëîâèå ðåàëèçàöèè îòâåòñòâåííîñòè Òóðöèè çà ãåíîöèä, “Âåñòíèê Àðìÿíñêîãî èíñòèòóòà ìåæäóíàðîäíîãî ïðàâà è ïîëèòîëîãèè â Ìîñêâå”, N 3, Åðåâàí, 2005.
19. Áàðñåãîâ Þ., Îòâåòñòâåííîñòü ãîñóäàðñòâà çà ãåíîöèä â ìåæäóíàðîäíîì ïðàâå, “Ãåíîöèä – ïðåñòóïëåíèå ïðîòèâ ÷åëîâå÷åñòâà. Ìàòåðèàëû I ìîñêîâñêîãî ìåæäóíàðîäíîãî ñèìïîçèóìà”, Ìîñêâà, 1997.
20. Áàðñåãîâ Þ., Òóðåöêàÿ äîêòðèíà ìåæäóíàðîäíîãî ïðàâà íà ñëóæáå ïîëèòèêè ãåíîöèäà (î êîíöåïöèè ÷ëåíà “êîìèññèè ïðèìèðåíèÿ” Ãþíäóç Àêòàíà), Ìîñêâà, 2002.
21. “Ñóäåáíûé ïðîöåññ Òàëààòà ïàøè”, ïîä ðåäàêöèåé Ñ. Ñòåïàíÿíà, Åðåâàí, 2007.
22. Îãàíÿí Ï., Ãåíîöèä àðìÿíñêîãî íàðîäà è çàùèòà ïðàâ ÷åëîâåêà, Åðåâàí, 2004.
23. Ìàðãàðÿí Â., Îñíîâàíèÿ ìåæäóíàðîäíî-ïðàâîâîé îòâåòñòâåííîñòè çà ãåíîöèä àðìÿí, “Âåñòíèê Àðìÿíñêîãî èíñòèòóòà ìåæäóíàðîäíîãî ïðàâà è ïîëèòîëîãèè â Ìîñêâå”, N 3, Åðåâàí, 2005.

**Լրացուցիչ**

1. Տիգրանեան Տ., Անգլիան եւ հայերը, Երևան, 1994:
2. Տատրեան Վ., Հայոց ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Բերկլի, 1995:
3. Ãàìåëåí À., Áðîí Æ.-Ì., Âîññòàíîâëåííàÿ ïàìÿòü, Åðåâàí, 1995.

| | |
|---|---|
| | 4. “Ãåíîöèä àðìÿí â Îñìàíñêîé èìïåðèè. Ñáîðíèê äîêóìåíòîâ”, ïîä ðåäàêöèåé Ì. Íåðñèñÿíà, Åðåâàí, 1983.<br>5. Äàäðèÿí Â., Îáçîð ìàòåðèàëîâ òóðåöêîãî âîåííîãî òðèáóíàëà ïî îáâèíåíèþ â ãåíîöèäå àðìÿí: õàðàêòåð è çíà÷èìîñòü ÷åòûðåõ îñíîâíûõ ñåðèé ñóäåáíîãî ðàçáèðàòåëüñòâà, “Ãåíîöèä – ïðåñòóïëåíèå ïðîòèâ ÷åëîâå÷åñòâà. Ìàòåðèàëû I ìîñêîâñêîãî ìåæäóíàðîäíîãî ñèìïîçèóìà”, Ìîñêâà, 1997.<br>6. “Ìåæäóíàðîäíûå îòíîøåíèÿ â ýïîõó èìïåðèàëèçìà, Äîêóìåíòû èç àðõèâîâ Öàðñêîãî è Âðåìåííîãî ïðàâèòåëüñòâà. 1878-1917”, Ìîñêâà-Ëåíèíãðàä, 1931-1940.<br>7. “Ðóññêèå èñòî÷íèêè î ãåíîöèäå àðìÿí â Îñìàíñêîé èìïåðèè 1915-1916”, ñîñò. Ã. À. Àáðàìÿí, Ò. Ã. Ñåâàí-Õà÷àòðÿí, Åðåâàí, 1995.<br>8. “Ñáîðíèê ìåæäóíàðîäíûõ äîãîâîðîâ”, ò. 1, ÷. 2, Óíèâåðñàëüíûå äîãîâîðû ÎÎÍ, Íüþ-Éîðê è Æåíåâà, 1994. |